ՀԱՎԱՏՔՈ՛Վ ԲՈՒԺՎԻՐ

«Վե՛ր կաց, վերցրո՛ւ քո մահիճը և գնա՛: Եվ մարդը առողջացավ վեր կացավ, վերցրեց մահիճը և ման էր գալիս» (Հովհ. 5:9):

Հիսուս եկել էր ծառայելու, հրաշագործությունների և բժշկություններ-ի ճանապարհով ցույց տալու Իր աստվածային զորությունն ու մարդկանց առաջնորդելու դեպի Լույս, դեպի ճշմարտություն, դեպի առավել կյանք և վերջապես՝ դեպի Աստված:

Երբ նա շրջում էր գյուղից-գյուղ, ավանից-ավան, հրեաների մի տոնի ընթացքում Գալիլիայից Երուսաղեմ է անցնում և այցելում *«Պրոբատիկե»* կոչվող ավազանը: Հրեաների լեզվով այն *«Բեթհեզդա»* էր կոչվում, որ նշանակում էր *«Ողորմության Դուռ»,* այսինքն՝ հայտնվում էր աստվածային ողորմությունը և այդ ավազանի ջրով հիվանդները բուժվում էին: Հիվանդների, կույրերի ու կաղերի հսկա մի բազմություն, գետնին պառկած հույսով սպասում էին ավազանի ջրերի խառնվելուն: Տիրոջ հրեշտակը երբեմն-երբեմն իջնում էր այդ ավազանի ջրերի մեջ և այն խառնում էր: Հիվանդներից նա ով առաջինը կարողանում էր ինքնիրեն գցել խառնված ջրերի մեջ, իր բոլոր հիվանդություններից անմիջապես բուժվում էր: Պարզ ժողովրդի հավատքը այս էր:

Ահա այդ սրահներից մեկում, մի անդամալույծ կար, որը երեսունութ տարի այնտեղ հիվանդ պառկած սպասում էր: Հիսուս երբ նայում է նրան, անմիջապես հասկանում է նրա վիճակը: Զգում է, որ նրա վշտահար ու մելամաղձոտ աչքերը օգնություն էին աղերսում: Նա Իր աստվածային խոր-թափանց հայացքը շեշտակի ուղղելով հիվանդին, քաղցր մի ժպիտով հարցնում է նրան. *«Ուզո՞ւմ ես առողջանալ»:* Նրա անսպասելի հարցից անակնկալի եկած հիվանդը հուզված պատասխանում է. *«Տեր, ոչ ոք չունեմ, որ երբ ջրերը խառնվեն, ինձ ավազանի մեջ իջեցնի և մինչ ես դանդաղում եմ, մեկ ուրիշն ինձնից ավելի առաջ է իջնում» (Հովհ. 5:7):* Հիսուս նայում է անդամալույծի աչքերի մեջ և հրամայում. *«Վե՛ր կաց, վերցրո՛ւ քո մահիճը և գնա՛»:* Անդամալույծը առողջանում է, վերցնում իր մահիճը ու սկսում քայլել:

Մեր այս օրերի դժվարությունների ու նեղությունների մեջ, երբ մի կողմից կան տնտեսական և քաղաքական տագնապներ, ընկերային-բարոյական լուրջ հարցեր, իսկ մյուս կողմից վաղվա անորոշություններն ու հոգեկան խռովալի կացությունները, ապրուստի և այլ մտահոգությունները անդամալույծ են դարձրել մեր առօրյա կյանքը, ի՛նչը կարող է մեզ ու աշխարհին տալ կյանք, հույս և մխիթարություն, եթե ոչ Հիսուսի վերոհիշյալ խոսքը ուղղված մեզ և բոլոր դարերի անդամալույծներին՝ *«Վեր կացե՛ք, վերցրե՛ք ձեր մահիճը և գնացե՛ք»*

Բարիք գործելու համար չկա ո՛չ օր, ո՛չ ժամանակ և ո՛չ էլ սահման: Աստված ինչ որ ստեղծեց բարի էր և մարդու համար կատարեց: Ժամանակը կամ օրը միմիայն միջոցներ են բարի գործեր կատարելու համար: Հետեվելով Աստծու օրինակին, պարտավոր ենք ամեն օր բարի գործեր կատարել: Ճշմարիտ քրիստոնյայի պարտականությունը ճիշտ նույնը պետք է լինի, ինչպես Քրիստոսի սերը եղավ մեր հանդեպ:

Այստեղ հարց է ծագում, արդյոք մենք իբրև հայ քրիստոնյաներ, այսօր, աշխարհի աղմուկի ու բազմանվագ եղանակների միջից պիտի կարողանա՞նք տարբերել և լսել Հիսուսի մեղմ, անուշ ու կյանք պարգևող ձայնը: Լքելով մեր մեղավոր անցյալը, կամքի ուժը պիտի ունենա՞նք ոտքի կանգնելու, այնպես, ինչպես Պրոբատիկեի ավազանի անդամալույծը խնդրեց ու հավատաց Քրիստոսին և բժշկվեց ու քաջաբար ոտքի կանգնելով, առանց վախենալու բոլորի առաջ վկայեց, թե իրեն բուժողը Հիսուս Քրիստոսն է:

Այսօր 21 դարեր հետո Հիսուսի ձայնը կրկին անգամ մաքուր, հատիկ առ հատիկ իբրև մարտահրավեր սփռվում է աշխարհով մեկ ու բոլորիս կոչ անում. ***«Վե՛ր կացե՛ք, վերցրե՛ք ձեր մահիճը և գնացե՛ք»:*** **Ամեն:**